



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 17 ՄԱՐՏ, 2025

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՁ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

Էին անեղ, անսկզբան՝ ծնունդ անճառ Որդի եւ Բան.
Որ արարեր զտիւ գործոյ եւ զգիշեր ի հանգիստ քնոյ.
Տուր ի ննջել՝ աչաց մարմնոյ, արթուն լինել մեզ ըստ հոգւոյ.
Զի ի տուրնջեան եւ գիշերի տացուք քեզ փառս անլռելի:

ՀԱՄԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ

ՀԱՅՐ երկնաւոր, Աստուած ճշմարիտ, որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի ի խրնդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յերկինս եւ առաջի քո. ընկալ՝ զիս որպէս զանառակ որդին, եւ զգեցո՛ ինձ զպարմուճանն առաջին, զոր մերկացայ մեղօք:

ՈՐԴԻ Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ, եւ առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ՝ վասն մերոյ փրկութեան, խաչեցար, թաղեցար եւ յարեար ի մեռելոց եւ համբարձար փառօք առ Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո. յիշեա՛ զիս որպէս զաւագակն յորժամ զաս արքայութեամբ քով:

ՀՈԳԻ Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան եւ ի վերնապրունն, եւ լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւագանին, մեղայ յերկինս եւ առաջի քո. մաքրեա՛ զիս վերսփին աստուածային հրով քո՝ որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՄ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօգօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ: (X3)

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարե-խօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈՐՁ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղերոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՍՈՍ 78

ԱՍՏՈՒԱԾ ԻՆԶՊԷՍ ԱՌԱՋՆՈՐԴԵՑ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Յակառակ այդ բոլորին, անոնք դարձեալ մեղանշեցին,
չհաւատացին անոր գործած հրաշքներուն:
Ուստի Աստուած մէկ փչելով սպառեց անոնց օրերը,
եւ սարսափի մէջ՝ անոնց կեանքերը:
Ամէն անգամ որ Աստուած անոնցմէ մաս մը կը սպաննէր,
իրեն կը դառնային, կը գոչային եւ զինք կը փնտռէին անձկագին:
Կը խոստովանէին թէ Աստուած է իրենց օգնական Վէմը,
թէ Բարձրեալ Աստուածը ինքն է իրենց Փրկիչը.
բայց անկեղծ չէին անոնց խօսքերը,
սուտ էին անոնց բոլոր արտայայտութիւնները:
Իրենց սիրտը բնաւ կապուած չէր Աստուծոյ, եւ անոր ուխտին հաւատարիմ չէին:
Սակայն գթառատն Աստուած ներեց անոնց մեղքերը, եւ չբնաջնջեց զանոնք.
այլ՝ շատ անգամ իր բարկութիւնը զսպեց,
եւ իր ամբողջ գայրոյթը անոնց վրայ չթափեց:
Նկատի առաւ, որ անոնք տկար մահկանացուներ են,
հովին նման՝ որ կ'անցնի եւ ալ բնաւ ետ չի գար:
Անապատին մէջ քանի անգամներ դառնացուցին զայն,
զայն տրտմեցուցին այդ ամայի վայրին մէջ:
Կրկին ու կրկին զԱստուած փորձեցին, գայրացուցին Իսրայէլի Սուրբ Աստուածը:
Մոռցան ինչ որ անիկա ըրաւ այն օրը՝ որ զիրենք ազատեց ռոսիին ձեռքէն.
Երբ ցոյց տուաւ իր նշանները եւ հրաշքները Եգիպտոսի՝ Տայանիսի դաշտին մէջ:
Արիւնի դարձուց անոնց գետերը եւ առուները, այնպէս՝ որ չկրցան խմել:
Անոնց վրայ շանաճաններ դրկեց, որոնք անոնց արիւնը ծծեցին,
եւ գորտերը՝ որոնք զիրենք ապականեցին:
Ուտիները դրկեց, որոնք անոնց բերքը կերան,
եւ մարախներ՝ որոնք անոնց աշխատանքին արդիւնքը փնացուցին:
Կարկուտով ոչնչացուց անոնց որթատունկերը,
եւ եղեամով՝ անոնց ժանտաթգենիները:
Կարկուտով կոտորեց անոնց նախիրները, եւ կայծակներով՝ ոչխարի հօտերը:
Անոնց վրայ թափեց իր հրաբորբ բարկութիւնը,
որտմտութիւնը, գայրոյթը եւ նեղութիւնը,
որոնք դրկեց իբրեւ մահաբեր հրեշտակներ:
Ազատ ընթացք տուաւ իր բարկութեան, չիսնայեց անոնց կեանքերուն,
այլ՝ ժանտախտով մահուան մատնեց:
Սպաննեց Եգիպտոսի մէջ բոլոր անդրանիկ ծնունդները,
Քամէն սերած ընտանիքներուն առջինեկ զաւակները:
Ապա իր ժողովուրդը առաջնորդեց աշխարհներու պէս,
զանոնք անապատ տարաւ ոչխարներու հօտի պէս:
Զանոնք առաջնորդեց այնքան ապահով, որ չվախցան ծովը մտնելէ,
մինչդեռ իրենց թշնամիները ծովուն մէջ ընկղմեցան:



ՄԵԽԹԱՐՈՒԹԻՒՆ ՆԵՂՈՒԹԵԱՆ ՄԷջ 78:32-53

Հակառակ Աստուծոյ փրկած բարիքներուն, մարդը փակալին կը մեղանչէ ու չի հաւաքար: Հեքա-քրքրականօրէն մեղանչումն ու անհաւատութիւնը միասին կը ընթանան: Երբ հաւաքաս կը սկսիս հեռու մնալ մեղքէն, որովհետեւ այդ հաւաքքդ քեզ ցոյց պիտի փայ ոչ միայն Աստուծոյ փրկած բարիքները, այլ՝ այն մեծ գործը որ կարարեց եւ իր լրումին հասցուց Յիսուս Քրիստոսով: Աստուծոյ փրկած ալ մէկ փչելով կը սպառէ անոնց օրերը: Մարդկային նկարագիրը բոլոր ժամանակներուն նոյնն է: Ամէն անգամ երբ պա-փուհասը կու գայ Աստուծոյ վերադառնալու, պահ մը զոջալու եւ զԱստուծոյ փնտրելու ընթացքին մէջ, մինչեւ որ անցնի պափուհասը, յետոյ եր վերադառնալու Աստուծոյ եւ խոստովանելու որպէս օգնական Վեմ: Բայց անկեղծ չեն այդ արքայապարտութիւնները, որովհետեւ պափուհասը որ անցնի դարձեալ մեղքի մէջ են: Սա ցոյց կու փայ որ իրենց սիրտը Աստուծոյ կապուած չէր: Ինչպէս առիթով մը մարգարէին ճամբով Աստուծոյ պիտի ըսէ. «Այս ժողովուրդը զիս շրթներովը կը պաշարէ, անոր սիրտը ինձմէ հեռու է»: Այս եղածներուն դիմաց, Աստուծոյ գթառարարութիւնը անոնց նկարամամբ, նկարի առնելով որպէս մահկա-նացուներ, որոնք կը նմանին հովի: Ահա այս երեւոյթին դիմաց Իր ողորմութիւնը եւ գուրջը ցոյց փայու համար:

Անապարհին մէջ քանի անգամներ դառնացուցին զԱստուծոյ: Անապար, որ իրենց ամբողջ կեանքը կախեալ էր Աստուծոյմէ, որով զիրենք կը կերակրէր, կը խմցնէր, բայց այդ բոլորով փակալին փրկման-ցուցին, զԱստուծոյ փորձեցին: Իսկ յաջորդ համարները կը ներկայացնեն Աստուծոյ կարարած հրաշք-ներն ու նշանները Եգիպտոսի մէջ, թէ ինչպէս ազարեց զիրենք ոտիսին ձեռքէն, հարուածեց անոնց գե-փերն ու առուները, անոնց բերքերը, նախիրները, եւ իր վերջոյ անոնց անդրանիկը, ապա Իր ժողովուրդը առջնորդեց ապահով անցնելով Կարմիր ծովէն, որոնք անվնաս անցան ու մտան անապար, մինչ թշնա-մին նոյն ծովուն մէջ ընկղմեցաւ: Այս նշաններն ու հրաշքները երկու երես ունէին, նշաններ Եգիպտոսի փառաւորին համար, հրաշքներ՝ Իսրայէլի ժողովուրդին համար: Այնպէս ինչպէս առիթով մը Փարիսեցի-ները նոյնը պիտի հարցնէին Յիսուսի, թէ ի՞նչ նշան կու փայ որպէսզի հաւաքանք:

Այս նոյն պարտութիւնը Պօղոս Առաքեալ կ'օգտագործէ, այն ինչ որ արձանագրուած է Ելից գիրքին մէջ, յիշեցնելով թէ այդ բոլորը պարահեցան անցեալին, բայց իբրեւ օրինակ այսօր մեզի, որպէսզի նոյն սխալին մէջ չիյնանք:

Այս երկարապարտում Սաղմոսէն հետեւեալը կու գայ մեզի սորվեցնելու:

ա. Զգուշացում մեղանչելէ:

բ. Զգուշացում կեղծաւորութենէ:

գ. Օգտագործել Աստուծոյ ողորմութիւնն ու գթութիւնը, ու Անոր համբերարարութիւնը, որպէս փրկութեան առիթ: Պօղոս Առաքեալ նոյնը կը յիշեցնէ ըսելով. «Քանի ժամանակը մեր ձեռքն է, օգտագործենք առիթը Աստուծոյ վերադառնալու»:

դ. Վարահ ըլլանք որ Աստուծոյ Ինք է որ մեզ կ'առաջնորդէ այնքան ապահով հասնցնելու մինչեւ խոստացուած երկիր: Իսկ թշնամիները որոնք ծովուն մէջ ընկղմեցան: Առաջին առիթով Փառաւորն ու իր գօրքը Կարմիր ծովուն մէջ: Երկրորդ առիթով Չարը իր գօրքով Յորդանան գետին մէջ, երբ Քրիստոս մտաւ մկրտուելու: Ահա թէ ինչու Քրիստոս առիթով մը պիտի ըսէ Իր աշակերտներուն. «Ձեր սրտերը թող չխռովին, մի վախնաք, Ես յաղթեցի աշխարհին»: Այսօր ալ նոյն պարգամը կ'ուղղէ մեզմէ իրաքանչիւրին այս դժուարին պայմաններուն մէջ ըսելով. «Ձեր սրտերը թող չխռովին, մի վախնաք, Ես յաղթեցի աշխարհին»:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ցանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ քազմամեղիս: